«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 37/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 06.12.2018թ. ժամը 17:00

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 24.10.2018թ-ին ստացված, Մանուշակ Առաքելյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, Մխիթար Ժամխարյանի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Թոռչյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ դեկտեմբերի 06-ին, ժամը 17:00-ին հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

**ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝**
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանը
Դիմումատու՝ Մանուշակ Առաքելյանը

**ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝**
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու՝ Մանուշակ Առաքելյանը

Մխիթար Ժամխարյանի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Թոռչյանը պատշաճ ծանուցվել էին նիստի մասին, սակայն նիստին չէր ներկայացել:

**ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝**
«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 24.10.2018թ-ին ստացված Մանուշակ Առաքելյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով,սնանկության գործով կառավարիչ՝քաղաքացի Մխիթար Ժամխարյանի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Թոռչյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

**ԼՍԵՑԻՆ**-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը, ստուգեց կարգապահական վարույթի կողմերի և հաձնաժողովի անդամների ներկայությունը: Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բողոքի բովանդակությունը ներկայացնելու համար ձայնը տվեց դիմումատու Մանուշակ Առաքելյանին,ով մասնավորապես հակիրճ ներկայացնելով դիմումը ներկայացրեց նաև իր դիմումի նպատակները,որը կայանում էր հետևյալում,ըստ էության դիմումատուն հանդիսանում է քաղաքացի Մխիթար Ժամխարյանի սնանկության գործով,որպես պարտատեր և անհանգստանում է սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Թոռչյանի գործողություններից մասնավորապես անգործությունից իր պահանջների բավարարման

ուշացումների համար:Դիմումատուն մասնավորպես նշեց,որ կառավարիչը իր զանգերին չի պատասխանում և պատասխանելուց էլ նշում է,որ օրենքով սահմանված կարգով կատարվում են գործողություններ իր պահանջի բավարարման ուղղությամբ,մասնավորապես համասեփականության իրավունքով պարտապանին պատկանող գույքի առանձնացման և իրացման վերաբերյալ,բայց հնարավոր է,որ բնակարանի մասնաբաժինի արժեքը կազմի ավելի պակաս քան նվազագույն վերջին կացարանի սահմանված արժեքն է,որի դեպքում իրացում չի կարող կատարվել,այդ փաստը անհանգստացրել է պարտատեր դիմումատուին, որից անհանգստացած գրել է դիմում «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին:

**ԼՍԵՑԻՆ** – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը առաջարկեց կարճել քաղաքացի Մխիթար Ժամխարյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Մանուշակ Առաքելյանի դիմումի մասով, քանի որ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի լիազորություններից դուրս է վերանայել դատարանի կողմից կայացված դատական ակտը կամ քննարկել կատարողական վարույթի ընթացքը կամ դատական ակտերի օրինական լինելու հարցը: Այս պարագայում կառավարիչը գործել և գործում է օրենքի շրջանակներում, դատարանի որոշումների հիման վրա և պարտավոր էր կատարել դատական ակտերը և օրենքները:
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը, սակայն նշեց, որ սնանկության գործով կառավրիչ Հովհաննես Թոռչյանը խախտել է «Սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագիրք»-ը, որի 7.8-րդ կետը սահմանում է, որ կառավարիչը իր գործունեությունը իրականացնելիս պարտավոր է պահպանել ՀՀ օրենսդրությամբ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքով, կանոնադրությամբ, սույն Կանոնագրքով և Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերով սահմանված բոլոր պահանջները: «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 3.4-րդ կետի համաձայն, կառավարիչը, ում նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, պարտավոր է հանձնաժողովի պահանջով ներկայացնել գրավոր բացատրություններ, ինչը կառավարչի կողմից չի կատարվել: Բացի այդ կառավարիչը որևէ կերպ կապ չի հաստատել հանձնաժողովի հետ և կարծիք չի հայտնել հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ:Կարգապահական հանձնաժողովի նախագահն արտահայտեց այն կարծիքը, որ Հովհաննես Թոռչյանի վարքագիծը՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ լիազոր մարմիններին, «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովին պարզաբանումներ չտալը կամ չհամագործակցելը խաթարում է «ՍԳԿԿ» ԻԿԿ գործունեությունը և ընդհանուր շահերը և վտանգում է կազմակերպության անդամների հետագա առողջ և հարգալից փոխհարաբերությունները:
«ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի նախագահը առաջարկեց վերանշյալ նկատառումներից ելնելով, «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5-րդ հոդվածի 5.1 հիմքով որպես կարգապահական տույժ՝հայտարարել հրապարակային նկատողություն, քանի որ սնանկության գործով կառավարչի կողմից թույլ է տրվել խախտում հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝**
Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝**
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 24.10.2018թ-ին ստացված Մանուշակ Առաքելյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Մխիթար Ժամխարյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի գործողությունները/անգործություն/, օրենքներին և

կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 հիմքով հայտարարել հրապարակային նկատողություն, իսկ դիմումատուի բերած բողոքի մասով կարճել, քանի որ սնանկության գործով կառավարիչը իրականացրել է իր գործառույթները «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ, 55-րդ հոդվածներին համապատասխան:
2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան